Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հոկտեմբերի 10 -ի N 618-Ա
որոշման

«ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ
ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարածքում կառուցել վարչական նոր շենք և բարեկարգել շենքին հարակից տարածքը: Քանի որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի բազմամարդ պաշտոնություն և ունի գրասենյակային անհարմար պայմաններ, ծրագրի գլխավոր նպատակն է բարելավել վերջիններիս աշխատանքային պայմանները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՎՀՀ 04703401:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Էջմիածին, Արարատյան 2, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի: Հոգևոր բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	2.400.000.000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, միաբանություն և պաշտոնություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	10 հոկտեմբեր, 2020 թ. - 31 դեկտեմբեր, 2023 թ.:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարածքում կառուցել վարչական նոր շենք և բարեկարգել շենքին հարակից տարածքը: 1. Հողային աշխատանքներ և քանդման աշխատանքներ - 58.000.000 դրամ: 2. Հիմքերի և պատերի ամրանավորման և բետոնային ու քարային աշխատանքներ - 795.000.000 դրամ: 3. Շենքի տանիքային աշխատանքներ - 232.000.000 դրամ: 4. Շենքի ինժեներական ցանցեր և հարդարման աշխատանքներ - 434.000.000 դրամ: 5. Հարդարում, դուռ, պատուհան և վերելակ - 415.000.000 դրամ: 6. Տարածքի բարեկարգում և հարակից կառույցների վերակառուցում - 116.000.000 դրամ: 7. Շենքի կահավորում - 350.000.000 դրամ: Ներմուծվող նյութերի և սարքավորումների արժեքը կազմում է 400.000.00 դրամ: Աշխատանքների արժեքը կազմում է 2.000.000.000 դրամ: Ծրագրի իրականացման ժամկետը 10 հոկտեմբեր, 2020 թ. - 31 դեկտեմբեր, 2023 թ.
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարածքում վարչական նոր շենքի կառուցում և շենքին հարակից տարածքի բարեկարգում: Ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 2.400.000.000 դրամ: Ներմուծվող նյութերի և սարքավորումների արժեքը կազմում է 400.000.000 դրամ: Աշխատանքների արժեքը կազմում է 2.000.000.000 դրամ: Ծրագրի իրականացման ժամկետը 10 հոկտեմբեր, 2020 թ. - 31 դեկտեմբեր, 2023 թ.
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	նախատեսված չեն

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ